Հովհաննես Շիրազ

Հովհաննես Շիրազին

Քեզ անվանեմ ես Մասիս սար,
Թե՞ կապուտակ Սևանա լիճ,
Մեր հույսերին դու հավասար,
Արարատյան սրբազան հող:

Քեզ անվանեմ հրաշք Գառնի,
Գեղարդ, Այրիվանք, Հաղարծին,
Թե՞ անվանեմ Մայր Հայաստան,
Երևանով իր նորածին:

Քառագագաթ պերճ Արագած,
Դրախտի դուռ, սիրտդ՝ մատուռ,
Թե՞ անվանեմ քերթողահայր,
Մեր երգերի սրտամրմուռ:

Եվ ավելի լավ կլինի,
Որ դու դառնաս ճիշը մանկան,
Քանզի նրա սրտում դեռ կա՝
Հավատ դեպի հայրենի տան:

Չվիր, գնա ու բույն հյուսիր,
Ծիծեռնակի պես սիրասուն,
Կարս քաղաքի Առաքելոց

Եկեղեցու սուրբ գմբեթում:

Եվ ամեն օր դու վաղ ծեգին
Դուրս գաս, չվես Մշո դաշտ,
Տեսնես Սիփան ու Վանա ծով,
Փակ դռներ՝ բացման հույսով:

Ու ամեն ինչ վերհիշելով՝
Վերադառնաս քո օրրան,
Որպես հայոց դու ծիծեռնակ,
Ավետաբեր այս գարնան: